Դէպի Կիլիկիա կամ Արեւմտահայաստան տանող ուղին կտրելը այնքան ալ հեշտ չէ. անիկա պատուած է 1.5 միլիոն անթաղ հասակներու հոգիներով... Անցնելու իւրաքանչիւր դիմակալելու բաւարար ուժ պէտք է ունենալ «հայոց քաղաքակրթութեան օրրանը» տեսնելու համար:



Կիլիկիոյ կաթողիկոսարանից աւերակ պատը (Սիս):

## ՈՂՋՈՒՆԵՆՔ ՀԱՅԵՐԸ

«ԱՅՍՕՐ ԵՐԿՐԵՆ ԳԱՂՁԱՃ ՇՈՒՐՋ 150 ՀԱՅԵՐ ՊԻՏԻ ՇՐՋԻՆ ԱՆԱՏՈՒԻ ՏԱՐԱՔԻՆ: ՄԱՍԱՄԲ ԿԱՐՕՏ, ՄԱՍԱՄԲ ՌԻՏԱԳՆԱՅՈՒԹԻՆ ԵՒ ԶՐՕՍԱՇՐՋՈՒԹԻՆ: ՄԵՃԻՄ ՈՍԱՆՔ ԱՐԳԱՇԱՏԱՆՔՈՎ ԿԸ ԴԻՄԱՒՈՐԵՆ ՆՄԱՆ ԶԱՄԲՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԵՆ ՀԱՅԵՐԸ, ԿԱՐԾԵԼՈՎ, ՈՐ ՅԵՏԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ՈՒՆԻՆ ԱՆՈՆՔ: ԸՆԴՂԱԿԱՌԱԿԸ, ՊԵՏԸ Է ՈՂՋՈՒՆԵՆՔ ԱՅՍ ՄԱՐԴԻԿԸ ԵՒ ԱՊԱՅՈՒՅՆՔ, ԹԵ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ ՈՐՔԱՆ ՀԻՒՐԱՍԵՐ ԵՆ ԹՈՒՐԵՐԸ», ԿՐԵՆ «ԹՐՔԻՅ ՏԵՅԼԻ ՆՈՒՉ» Ի ԸՏԵՏԵԱԼ ՅՕԴՈՒԹԻՆ ԲԱՅԱՏՐԱԿԱՆԸ

Միացեալ Նահանգներէն շուրջ 150 հայեր երկար ճամբայ կտրած են այցելելու համար այն երկիրը, ուր ծնած են իրենց նախահայրերը: Զամբորդութիւնը կազմակերպուած է Նիւ Եորքի Հայկական եկեղեցիին եւ Թուրք-Հայկական Առեւտրական Կապերու խորհուրդին կողմէ:

Ամերիկահայերը «Մ. Գրիգոր Լուսաւորիչի ոտնահետքերով» են իրենց պայեմուն ուղղիներով պիտի շրջին Պոլիսէն մինչեւ Հարաւային Անատոլու: Անոնք գազին Այա Սոֆիա, ապա՝ Կեսարիա:

Կեսարիոյ Մ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, Սէյիթ Կազի թղթամասին մէջ, մեծ նշանակութիւն ունի հայերուն համար: Անիկա Երուսաղէմէն ետք հայոց ամենէն սրբազան վայրերէն է, որովհետեւ եկեղեցին կառուցուած է ճիշդ 1700 տարի առաջ: Աշխարհի տարածքին հայեր կը նշեն հայկական եկեղեցիին հիմնադրութեան 1700ամեակը եւ այս տարին կը կոչեն «հայերուն տարին»: Թուրքիոյ մէջ ապրող հայերը տարին երկու անգամ կ'այցելեն եկեղեցին:

Ամերիկահայերը մեծ արարողութիւն մը կատարեցին Մ. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Կեսարիոյ կառավարիչը, քաղաքապետը եւ գործարարներ այդ գիշեր մասնակցեցան «համակրանքի եւ եղբայրութեան» ընթերցի մը: Ոմանք այցելեցին իրենց ազգականներուն, նաեւ այն տունները, որոնք իրենց պատկանած էին: Մայրենի Սանիկ (՝) վերապրեցաւ զգացական պահեր, այցելելով այն տունը, ուր ինչ հեռացած էր, երբ միայն 8 տարեկան էր: Անոնք հանդիպեցան հին բարեկամներու եւ վերապրեցան հին օրեր, շրջելով կարօտի էջերուն մէջ:

Լրատուական տեղեկագրութիւնները ամերիկահայերուն թուրքիա այցելութեան պատճառները խեղաթիւրելով շուրջ մէջ ձգեցին ճամբորդութիւնը: Հայոց Մեսրոպ պատրիարքն ու Կեսարիոյ Այվազեան քահանայն քննադատեցին ճամբորդութիւնը քաղաքականացնելու փորձերը: Թուրք - Հայկական Առեւտրական Կապերու խորհուրդը յայտարարեց, թէ կը միտի ամէն տարի 40 հազարէն 50 հազար հայեր այցելութեան բերել Թուրքիոյ արեւելեան եւ հարաւարեւելեան շրջանները: Անոնք կ'աւելցնեն, թէ շրջանը 180 հազար տոյար պիտի շահի միայն հայ զբոսաշրջիկներէն շուրջ մէջ: Այս գումարով կարելի է շքեղ պանդոկներ կառուցել եւ աւելի մեծ թիւով զբոսաշրջիկներ ներգրաւել դէպք այս շրջանը:

Հայերը ողջունելը պիտի աւելցնէ մեր վարկը: Անատոլուի կարգ մը շրջաններուն մէջ (մասնաւորաբար վանի մէջ) մարդիկ երբեմն գիտակից կամ անգիտակից հակակրանք մը կը տածեն հայերուն նկատմամբ: Եթէ այս մարտիկը կը մտածեն բողոքել երկրէն գաղթած հայերուն այցելութեան դէմ, ապա մեծ վնաս պիտի պատճառեն թրքական ընկերութեան եւ

երկրին:

Պէտք չէ մոռնալ, որ Անատոլուն հայոց քաղաքակրթութեան օրրանը եղած է: Անոնց պայեմուն հետքերը տակաւին կարելի է տեսնել Անատոլուի տարածքին: Հայերուն իրաւունքն է հոս գալ, աղօթել եւ հանգիստ ճամբորդել (առանց մտահոգուելու): Մեր պարտականութիւնն է անոնց ապահովել հանգստութեան այս մթնոլորտը, որպէսզի անոնք դարձնալ գան, երբ որ ուզեն:

Ինքնավստահ երկիր մը այսպէս պէտք է վարուի...

## ՆՈՅԻ ԵՐԿՐԻՆ ԳԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

«ՏԱՐԻՆԵՐԵ Ի ԿԵՐ ԶՐՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ԶԱՐՏԵՍՆԵՐԸ ԴՈՒՐՍ ՄԱՅԱԾ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹՈՒՐԵԻԱՆ ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏՐԱՍՏ Է ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԹԵԼՈՒ: ԺԵՐԸՄԻ ՍԻԼ ԿԸ ԶԱՄԲՈՐՈՂԵ ԴԵՊԻ ԱԳԱՐԱԿՆԵՐՈՒ ՄԵՋ ԿՈՐՍՈՒԱԾ ՈՐՄԱՆԿԱՐՆԵՐՈՒ ԵՒ ՏԱՊԱՆՆԵՐՈՒ ԱԶԽԱՐԸ», ԿԸ ԳՐԵ ԼՈՆՏՈՆԻ «ՏԸ ԹԱՅԱ» ԹԵՐԹԸ, ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ԱՆՈՐ ՅՕԴՈՒԱԾԸ

Աղեղնաձէ ոտքերով մարդ մը գետնի վրայ ընկնելու փոսերը գոցելով կը կտրէր դէպի Ջիբալէ տանող ճամբան: Նշան ըրաւ, որ կանգ առնեմ եւ ստիպեց, որ վարձու ինքնաշարժիս անիւներով անցնիմ իր պատրաստած քարով ու տիղմով շաղախին վրայէն: Ասիկա ի վերջոյ իսլամական արեւելեան թուրքիան էր, Աֆղանիստանի ումբակոծումի ժամանակ: Աւելի վտանգաւոր բաներ կրնայի կանկալել:

Տխուր յիշողութիւններ պահուած կը մնան արեւելեան թուրքիոյ մէջ: Աւելի արագ կը յիշես զրահապատ փոխադրակառքեր, քան թէ՛ անձնական շրջապատայտներ: Զբոսաշրջութիւնը ինքնին կանգ առաւ երկրին արեւելեան մասին մէջ, երբ 1990ական տարիներուն զին-

ւորական սոսկալի ներկայութիւն մը եւ քրտական ապստամբութիւնը, ինչպէս նաեւ՝ առեւտրական վտանգը շրջանը դուրս պահեցին ճամբորդներու շրջապատայտ ուղիներէն: Սակայն 2000ին թուրքերու եւ քիւրդերու միջեւ համաժողովայն խաղաղութեան պայմանագրով ընկերութիւններ աստիճանաբար սկսան վերահաստատուել այս առասպելական շրջանը: Արարատ լեռը 20 տարի ետք այժմ բացուած է լեռնազնայներու դիմաց:

Շար.ը՝ էջ 10

## ՄԱՀՄԱՆԷՒ ՄԱՀՄԱՆ. ԹՈՒՐԻՔԻԱ՝ ԱՐՈՒԵՍՏԻ

### ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ՀԱՅԵԼԱՑՈՅՑ ՄԸ

ՊՈԼՍՈՅ ՄԵՋ «ՆԻՒ ԵՈՐԸ ԹԱՅԱ» Ի ԳՐԱՍԵՆԱԿԻՆ ՆԱԽԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ՝ ՍԹԻՖՈՆ ԸՆՆՁՐ ԹՈՒՐԵԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ ԿԸ ԶՆՋԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԸԱՂԱՔԱԿՐՈՒԹԵԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԸ

Թուրքիոյ մէջ ապրած տարիներու օտար բարեկամներ յաճախ ինծի կը հարցնէին, թէ ո՞ր թանգարանները պէտք էր այցելել: Ունէի հաւաքածոներու ցանկ մը, որ իբրեւ ներածական կը ծառայէր այս հնադարեան երկրին հարուստ ժառանգութեան:

Սակայն աւելի խոր իրականութիւնը այն է, որ թուրքիան ինքնին թանգարան մըն է: Ոչ մէկ տարածք այսքան տարբեր եւ բազմաթիւ քաղաքակրթութիւններու օրրանը եղած է:

Այն երկիրը, զոր այսօր թուրքիա կը կոչենք, արգասաբեր մահիկին սիրտն էր, այն վայրը, ուր երկրազոքութիւնն ու քաղաքային կեանքը ծնունդ առած են: Անիկա ծննդավայրն էր Հոմերոսի եւ Հերոտոզոսի, Միտաս թագաւորին եւ Կրեսոսի, Մ. Պոտոսի եւ Մ. Նիկոլայոսի: Արիստոտէլ փիլիսոփայութիւն սորվեցուցած է հոս եւ Դիոգէնէս՝ ազնիւ մարդ մը փնտռած: Այս նսկայական տարածքին վրայ արշաւած են պատմութեան մեծագոյն տիրակալներէն ոմանք, ինչպէս՝ Դարեոս, Լենկթիմուր, Հանիպալ եւ Սոյաւհետտին: Հոս էր, որ Աղեքսանդր կտրած է Գորդեան հանգոյցը եւ Յուլիոս Կեսար ըսած է՝ «Եկայ, տեսայ, յաղթեցի»:

Մեզի ծանօթ բազմաթիւ քաղաքակրթութիւններ, եգիպտացիներ, հոններ, հռոմէացիներ, արաբներ, պարսիկներ, բիւզանդացիներ եւ օսմանցիներ տարածուած են այս երկրին վրայ: Այլ քաղաքակրթութիւններ, ինչպէս՝ փուրգիացիներ, կայաթացիներ, ուրթիւնեաններ, լիտացիներ, քարեաններ եւ պարսպացիներ հզօր էին ժամանակին, սակայն այժմ առասպելի կարգ անցած են: Բոլորն ալ խոր հետքեր ձգած են այս երկրին մէջ եւ միասնաբար այս արդի երկիրը կը վերածեն պատմական եւ մշակութային հայելացոյցի մը:

Սակայն այս անզուգական հարստութիւնը միաժամանակ անէծք է եւ օրհնութիւն: Թուրքիա այնքան մեծ թիւով պատմական վայրեր եւ հնադարեան իրեր ունի, որ զանոնք դասաւորելը, պաշտպանելը, ուսումնասիրելն ու ցուցադրելը դժուար գործ է: Թուրքիոյ մշակութի նախարարութիւնը խոցալիօրէն աղքատ է եւ հազիւ կրնայ վճարել պաշտօնեաներուն աշխատավարձը:

Աշխարհը երբեմն հետաքրքրութիւն կը ցուցադրէ թուրքիոյ մէջ հնադարեան վայրի մը վիճակին նկատմամբ, իսկ վերջին տարիներուն՝ գէթ երկու անգամ. առաջինը՝ քրտական Հասանջեյֆի գիւղաքաղաքին մէջ եւ երկրորդը՝ Եփրատի ափերուն հռոմէական պահպանուողի աւերակները պարունակող գիւղաքաղաքին՝ Ջէոկմայի մէջ: Երկու պահպանութեան հնադարեան մշակութի սիրահարներ գայրացած էին, որ ամբարտաւի մը շինութիւնը ջրամբար պիտի ընէր եգալի հնութիւններ:

Թուրքերը գայրոյթի զրսւտութեանը կը հակադրեն միաժամանակ վանողական եւ ամբողջովին հասկնալի ձեւով: Անոնք կ'ըսեն. այնքան շատ հնութիւններ ունինք, որ եթէ որեւէ տեղ բազը հողի գարնան, անգին բան մը դուրս կու գայ: Արդեօք պէտք է դադրի՞նք մեր ապագան կառուցելէ, անցեալի մէկ բեկորը պահպանելու համար:

Թուրքիոյ տարածքին բազմաթիւ քաղաքներու մէջ հնագիտական թանգարաններ կառուցուած են: Անոնք կը ցուցադրեն տուեալ շրջանի մը մէջ յայտնաբերուած իրերու հրաշալի հաւաքածոներ: Լաւագոյնը կը գտնուի Անթալիոյ մէջ, Միջերկրականի ափերուն ետուն քաղաք մը, ուր մարդկային բնակչութիւնը շարունակուած է 50 հազար տարիէ ի

վեր: 1985ին բացուած թանգարանին մէջ կը ցուցադրուին հին քարէ դարէն մինչեւ հռոմէական ժամանակաշրջանի հնութիւններ: Անոնց շարքին է մարմարէ դամբարան մը, որուն վրայ փորագրուած են Հերակլէսի տաժանակիր աշխատանքները:

Որեւէ այլ երկիր մէջ այս թանգարանը տեսարժան վայր մը պիտի ըլլար: Սակայն անոր համար կը խամրի դուրս գտնուող հնութիւններուն դիմաց: Քաղաքը կը հպարտանայ իր հռոմէական բերդով, 130ին կը հպարտանայ իր այցելութեան առիթով կառուցուած փարթամ դարպասով եւ 13րդ դարու աշտարակուող միւնարթով:

Նոյն հակադրութիւնը ակներեւ է Թուրքիոյ ամբողջ տարածքին: Ինչո՞ւ այցելել Ատանայի թանգարանը, երբ խաչակիրներու բերդեր կը կանչեն քանի մը քիլոմետր հեռու արածացող բլուրներէ: Ի՞նչպէս կարելի է վանի թանգարանը բաղդատել Իշաք փաշայի փառահեղ պալատին հետ, կամ հայկական 1000 տարեկան մայրաքաղաք Անիի աւերակներուն հետ, որոնք կը տարածուին դէպի հիւսիս:



Նիւթական տազնապար գլխաւոր արգելքն է թուրքիոյ գանձերուն պահպանութեան եւ վերանորոգութեան, ինչպէս նաեւ՝ բացօթեայ կամ ծածկուած թանգարաններու կառուցումին: Վերջերս երկրին մէջ պատահած տնտեսական անկումը վստահաբար պատճառ պիտի դառնայ, որ պատմական յատկացումները աւելի նուազին: Օտար նուիրատուներ մեծ ներդրումներ կատարած են հոլանդացիներով:

Շար.ը՝ էջ 8

Պատրաստեց  
Լ. ԿԻԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն ԱՇԽԱՐՀ



## ՆԻՒԵՈՐՔԻ ՄԷՋ ՊԱՅԹՈՒՄ. ՇԷՆՔ ՄԸ ՓՈՒԼ ԵԿԱԻ

Մանհատթընի մէջ բարձր շէնք մը փուլ եկաւ երէկ, պահ մը Նիւ Եորքի բնակչու-թիւնը սարսափի մատնելով: Քաղաքի մը մէջ, ուր տակաւին թարմ է 11 Սեպտեմբերի դէպքին պատճառով գնցուած, ամէնէն փոքր պայթուումն անգամ բնականաբար խուճապ կրնայ մատուցել վարդիկ:

Շէնքը արհեստից մարտարան մըն է: Ոչ պաշտօնական աղբիւրներու համաձայն՝ կրնայ պայթուումը հետեւանք ըլլալ «ճարտարարուեստական» արկածի մը, սակայն պաշտօնական ոչինչ կ'ըսուի ցարդ այս գծով: Կան բազմաթիւ վիրաւորներ:

## ԽԱԹԹԱՊ՝ ՍՊԱՆՆՈՒԱԾ

ՄՈՍԿՈՒԱ, 25 (ՌՈՅԹԸՐԸ)- Բուսիա յայտարարեց, որ իր բանակը սպաննած է երկրին մէջ ամէնէն աւելի փնտրուած մարդոցմէ մէկը՝ արաբական ծագումով չեչէն անընտրողական ղեկավար ինքնապաշտպան, որուն շուրջ կասկածներ գոյութիւն ունէին, թէ կապեր հաստատած է «Բաշխուս» ցանցին հետ:

«Միջազգային ահաբեկիչ ինքնապաշտպանութեան և Զինուորական Ապահովութեան Ծառայութեան կողմէ Չեչենիոյ մէջ կատարուած յատուկ գործողութեան մը ընթացքին», յայտնեց նշեալ ծառայութեան մէկ բանբերը:

Բանբերը մանրամասնութիւններ չփոխանցեց ինքնապաշտպանութեան մասին, սակայն յայտնեց, որ անոր սպանութիւնը փաստող որոշ ապացոյցներ պիտի պարզուին աւելի ուշ:

«Ինքըրբաբար» լրատու գործակալութիւնը նախապէս հաղորդած է, որ ինքնապաշտպան արշաւ մը արդէն իսկ սկսած է անցեալ ամսուան ընթացքին:

## ԱՄԱՌԱՅԻՆ ԻՐԱՅԱՏՈՒԿ ՔԵՐՄԷՍ Կազմակերպութեամբ՝ ՃԵՄԱՐԱՆՆԵՐՈՒ ԵՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

- Աւելի քան 20 նոր եւ հետաքրքրական խաղեր:
  - Անակնկալ եւ ճոխ յայտագիր փոքրերու եւ մեծերու համար:
  - Տեսակաւոր ուտելիքներ:
- Տեղի կ'ունենայ Շաբաթ 4 եւ Կիրակի, 5 Մայիս 2002, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Չայիայէն (Tico-Tico) ժամը 3:15ին եւ Արթիկիսէն (Սիմիթեան շէնքեր), կէսօրէ ետք ժամը 3:20ին:

## ՍՈՒՏԸ ԱԶՍ

ՄԱՍԹ - Երթեւեկը ապահովուած է օրոպիսուներով, Պուրճ Համուտէն «Շաղկոյեան» կեդրոնէն, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Չայիայէն (Tico-Tico) ժամը 3:15ին եւ Արթիկիսէն (Սիմիթեան շէնքեր), կէսօրէ ետք ժամը 3:20ին:

## 26 ԱՊՐԻԼ - 2 ՄԱՅԻՄ 2002 ԵՐԿԻՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

«Երկիր»ի վաղուան թիւին 3րդ էջով մենք կը կարդանք «Պատմութիւնը կեղծ կատեգորիա չէ, եթէ այն չընկնի «ՇԵՐ ձեռքը» յօդուածը, որուն մէջ կ'արտայայտուի այն միտքը, որ հայրենի քաղաքական կեանքին մէջ կարգ մը կազմակերպութիւններ չեն խորշիկ ունիւնել քաղաքացիական միջոց դարձնել պատմութեան կեղծումը, ինչ որ կը նոյնասօր թուրքերուն կողմէ Յեղասպանութեան փաստի ուրացման հետ:

4րդ էջով «Երկիր» կ'անդրադառնայ Հայաստանի Ազգային ժողովին մէջ պատգամաւորական յաւելեալ արժանիք ունենալու կիներու պահանջին:

Ապրիլին Ռաշիկիթընի մէջ կայացած է Միջազգային Դրամական Ֆոնտի էլեմէնտար յանձնախումբի նիստը, որ հաստատած է ԱՊՀ-ի եօթը երկիրներու պարտքի կրճատման ծրագիրը: Թէեւ Հայաստան այդ ցանկին մէջ էր, սակայն այդ կարեւորութեան վերջ պիտի ըլլայ: Այս նիստի կ'անդրադառնայ «Երկիր» իր 7րդ էջի տնտեսական բաժինով:

8րդ էջով կը կարդանք «Չեչենիոյ աշխատանքի շուկայ» յօդուածը, որ կ'անդրադառնայ Հայաստանի մէջ գործազրկութեան տագնապին: 9րդ էջին «Իրաւական» բաժինով «Երկիր» կ'անդրադառնայ Հայաստանի վիճակագրական դատարանի Գագիկ Զեհնաբեկեանի պաշտօնական կրթական հասանակներուն:

## «ՉԷՄՓԻԸՆՉ ԼԻԿ»

### ՄԱՆՉԵՍԹԸՐ ԵՌԻՆԱՅԹԸՏ – ՊԱՅԵՐ ԼԵԻԵՐՔՈՒԶԸՆ՝ 2–2

«ՉԷՄՓԻԸՆՉ ԼԻԿ»ի կիսաաւարտական հանգրքուանի երթի ճակատուածքին, Մանչեսթըր Եունայթըտ «Օլտ Թրեֆորտ»ի մէջ արձանագրեց ոչ համոզիչ աղբիւրք մը, երբ Պայքեր Լեւերքուզընի դէմ մրցումը աւարտեց 2–2 արդիւնքով: Թէեւ անդրկազմակերպող մը Ա. կիսաաւարտին 1–0 արդիւնքով առաւելութիւն մը ունէր, շնորհիւ Օլիվըր Նեօփիլ (75րդ) նշանակեցին Պայքերի կողմէ:

Դարձի մրցումին, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ երեքշաբթի, 30 Ապրիլին, Մանչեսթըր Եունայթըտ կը գտնուի բաւական դժուար կացութեան մը դիմաց: Անիկա եթէ յաղթանակ մը չկարենայ արձանագրել, պէտք ունի առնուազն 3–3 արդիւնքով հաւասարութեան մը, այլապէս դուրս կը մնայ մրցաշարքէն:

## ԵՈՂԱՆՍԸՆ ՎԵՐԸՆՏՐՈՒԵՑԱԻ ԵՌԻ. Է. ԷՖ. Ա.Ի ՆԱԽԱԳԱՀ

Երէկ, Շուէտի մայրաքաղաք Սթոքհոլմի մէջ տեղի ունեցաւ ԵՌ. Է. ԷՖ. Ա.Ի նախագահի ընտրութիւնը, որուն ընթացքին շուէտացի Լենարթ Եոհանսըն յաջողաբար չորրորդ անգամ ըլլալով պահեց իր պաշտօնը: 72 տարեկան Եոհանսըն, նախապէս ԵՌ. Է. ԷՖ. Ա.Ի նախագահ ընտրուած էր 1990ին, 1994ին եւ 1998ին:

Յիշատակելի եղաւ ֆրանսացի Միշել Փլաթինիի ԵՌ. Է. ԷՖ. Ա.Ի յանձնախումբին մաս կապմէնը, երկու այլ նորեկներու կողքին, մինչ մնացեալ չորսը պահեցին իրենց պաշտօնը: 46 տարեկան Փլաթինի, որ այժմ Յրանսայի ֆուտբոլի ֆետերատիոնի փոխ նախագահն է, ԵՌ. Է. ԷՖ. Ա.Ի մէջ ստանձնեց Յրանսայի ֆուտբոլի ֆետերատիոնի նախագահ Բլոտ Սիմոնի պաշտօնը:

## ՅԱՐԿԱՆԵՒ ՏՈՒՐԸ՝ ԸԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ  
ըր ախոր կը շարունակեն պահանջել մարդկութեան դէմ կատարուած ոճիւրի դէմ համաձայն ու զատապարտումը: Ախոր մենք կը խոնարհինք մեր նահատակներուն յիշատակին առջև՝ այն խոր համոզումով, որ պատմական արդարութեան վերականգնումը անխուսափելի է, կ'ըսէ նախագահ Քոնչարեպն ուղերձին մէջ:

Իր կարգին, Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան հրապարակած է ուղերձ մը, ուր նշած է, թէ Հայաստանի կողմէն Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչումը, դատապարտումը եւ պատմական արդարութեան վերականգնումը միայն տրեւէ փորձ, որ հիմք կը դառնայ մարդկութեան պատմութեան մէջ նմանօրինակ ոճիւրներու ընդմիջու ընդհատման:

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան Միջուկային Պայքերի մէջ լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին անդրադառնալով թուրքական Յեղասպանութեան քննարկումները արտահայտեց, որ կարելի կ'ըլլայ պետական մակարդակով թուրքիոյ հետ այս հարցին շուրջ երկխոսութեան սկիզբը:

Հայաստանի մէջ Իրաքի դեպքան Ապտիլ Բատարի նշեց, որ Յեղասպանութիւնը համաշխարհային մակարդակով թուրքիոյ հետ հարցը կրնանք դնել երկկողմանի յարաբերութիւններու օրակարգի վրայ: Նախարար Օսկանեանի կարծիքով, «Յեղասպանութեան ճանաչման հարցը եւ թուրքիոյ հետ յարաբերութիւններու բնականոնացումը երկու տարբեր հարթակներու վրայ պէտք է դիտել, եւ միայն յարաբերութիւններու հաստատումը է, որ կարելի կ'ըլլայ պետական մակարդակով թուրքիոյ հետ այս հարցին շուրջ երկխոսութեան սկիզբը»:

## ՕՏԱՐ ԴԻՄԱՍԱԳԵՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Հայաստանի մէջ Ռուսիոյ դեպքան Անատոլի Տրիտեպով, որ 24 Ապրիլին այցելեց Միջուկային Պայքերի լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին անդրադառնալով Հայկական Յեղասպանութեան քննարկումները արտահայտեց, որ կարելի կ'ըլլայ պետական մակարդակով թուրքիոյ հետ այս հարցին շուրջ երկխոսութեան սկիզբը:

## ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԱՏԵԱՆ ՄԸ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ

վարութեան ու արձակուած վճիռներուն, պնդելով, որ պաղեստինեան իշխանութիւնը պէտք է արտայայնէ ամբաստանեալները: Շարուն վերստին շեշտեց, որ իսրայէլեան ուժերը պաշարուած պիտի պահեն պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթի գրասենեակները, մինչեւ որ ամբաստանեալները յանձնուին Իսրայէլի մէջ դատուելու համար: Արաֆաթի խորհրդատու Նապիլ Ապու Ռուտայնա ըսաւ, որ Իսրայէլ իրաւունք ունի պահանջելու ամբաստանեալներուն արտայայնումը:

Գատա վարութիւնը տեղի ունեցած էր Ռամալլայի մէջ, Արաֆաթի պաշարուած կեդրոնատեղիին մէջ: Միւս կողմէ, իսրայէլեան բանակը կը շարունակէ գործողութիւնները պաղեստինեան շրջաններուն դէմ: Չորեքշաբթիէն Հիւզարթի յուսցող գիշերուան ընթացքին, իսրայէլեան ուժեր Հեպրոն ներխուժեցին, որ սպաննեցին ոստիկան մը, ինչպէս նաեւ յորս հոգի վիրաւորեցին: Քանի մը ժամ քաղաքի մէջ մնալէ ետք, իսրայէլեան ուժերը հեռացան: Հեպրոն Այսրորդանանի գլխաւոր քաղաքներէն միակն էր, որ իսրայէլեան բանակին կողմէ չգրաւորեցաւ Մարտ 29ին ձեռնարկուած պիտուորական արշաւին: Պաղեստինեան ապահովութեան աղբիւրներ հաղորդեցին, որ բախում մը տեղի ունեցած է ոստիկանութեան հաստատած անցարգելներէն մէկուն վրայ Պէյթ Քաիլի գիւղին մօտ: Անոնք աւելցուցին, որ իսրայէլացիները ոչ պիտուորական տարապով, կրակ բացին, երբ ոստիկանները պահանջեցին, որ կանգ առնեն անցարգելին վրայ:

Իսրայէլեան բանակը մէկաբարստիւթիւն չկատարեց Հեպրոնի ներխուժումին յորին մասին:

Կապալի մէջ, իսրայէլեան ուժեր սպաննեցին չորս պաղեստինցիներ, որոնք կը փորձէին յարձակում գործել իրէական Բֆար Տարում բնակեցման վայրին վրայ, յայտնեց բանակին մէկ բանբերը: Պաղեստինեան ապահովութեան աղբիւրներ մէկնաբարստիւթիւն չկատարեցին:

«Նիւ Եորք թայմս» օրաթերթին կողմէ հրապարակուած լուրի մը համաձայն, Շարուն ըսած է, թէ հաւանաբար արտօնէ, իսրայէլեան զայ պաշարուած Ռամալլայէն եւ Կապալի հաստատուի: Օրաթերթին համաձայն, Շարուն կ'ուզէ առիթ տալ Արաֆաթի, որպէսզի փաստէ, թէ իսրայէլեան իսրայութիւնը կ'ուզէ Կապալի մէջ հակակշիռի տակ առնէ պաղեստինեան ուժերը դադարեցնելով Իսրայէլի դէմ յարձակումները: Սակայն պաղեստինափոշու յայտագիրի մը մէջ, Շարուն յայտարարեց, որ վստահ է, թէ Արաֆաթ պիտի ձայնագրէ:

Բեթլեհէմի մէջ շարունեցաւ տակաւին Ռ. Օնիդեան եկեղեցոյ պաշարումը: Իսրայէլ եւ պաղեստինցիները երեք օրէ ք վեր բանակցութիւններ կը կատարուին Ռուսի մը ապահովելու համար տագնապին: Իսրայէլ կը պնդէ, որ պաշարումը պիտի չքակէ, եթէ եկեղեցին ապաստանած աւելի քան երեսուն պիտեալներ անմատուցուին: Բանակին մէջ բանբերը յայտնեց, որ երէկ կարելի եղաւ եկեղեցիին ղրուք բերել իսր պատանիներ եւ երկու դիակներ: Յստակ չեղաւ, թէ ինչպէս կարելի եղաւ ապառել ինչ պատանիները: Բանակին հաղորդած տեղեկութիւններուն համաձայն, պիտեալները հաւանութիւն տուած են քանի մը պատանիներ ապառ արձակելու:

## ԴԻՄԱՍԱԳԵՆԱԿԱՆ ԱՄԱՅԵՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԸԱՐՈՒՆԱԿՈՒՆ

Յունաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներ՝ ձորձ Փափանտրեան եւ Իմայիլ ձէմ խաղաքար միացեալ առաքելութեան մը համար Իսրայէլի մասնակցութիւնը շարունակեցին: Փափանտրեան մարտի 26-ը, որ այս առաքելութիւնը յոյս ներշնչեց պաղեստինցիներուն եւ իսրայէլացիներուն: ձէմ իր կարգին ըսաւ, որ այս առաքելութիւնը մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ, որովհետեւ տարակարծութիւններ ու դժուարութիւններ ունեցող Թուրքիա եւ Յունաստան հաշտութիւնը մը գոյապարտեց իր համայնուէլով որ բանակցութիւններու ձայնով կարելի է յուժել տագնապները:

Փափանտրեան եւ ձէմ երկվ-Ռամալլայի մէջ տեսակցութիւն ունեցան Արաֆաթի հետ: Տեսակցութեան արարին, անոնք յայտարարութիւն կատարեցին: Երկու նախարարները տեսակցութիւններ ունեցան նաեւ Շարունի եւ արտաքին գործոց նախարար Շիմոն Փերեւի հետ:

Արաֆաթ ըսաւ, որ կ'ողջունէ թուրք-յունական առաքելութիւնը, յուսալով որ Իսրայէլի այլ պայմաններուն: Չորեքշաբթի օր շրջան այցելած էին նաեւ Երուսաղեմի Միտրոպոլիտ արտաքին քաղաքականութեան գլխաւոր պատասխանատու խաւի Սոլալան եւ Միջին Արեւելքի պատուիրակ Միլիշ Անիշէ Մորաթիւնա: Արաֆաթի հետ ունեցած տեսակցութեան արարին, Սոլալան ըսաւ, թէ Արաֆաթի կեդրոնատեղիին մէջ տիրող պայմանները ցնցիչ են:

Միջազգային դիմադրական ճիգերուն ծիրէն ներս, երէկ ձափու եւս պարտաստակամութիւն յայտնեց իսրայէլական արտաքին քաղաքականութեան գլխաւոր պատասխանատու գործընթացի մէջ: ձափու առաջնակեց իսրայէլի իսրայութեան խորհրդատուով մը: Արտաքին գործոց նախարար Երիթ Քաուալուչի ըսաւ, որ ձափու չէր ուժեղ պայտարակցութիւն մըն է եւ որուն չէր դրոշմները պիտի նպաստէ իսրայութիւնը:

## ՄԱԿ - ԻՍՐԱՅԷԼ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԺՆԵՆԻ ԵՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՍՍԻՐ

ՄԱԿի եւ իսրայէլացի դիմադրական ճիգերով վստահ են, թէ այսօրուան բանակցութիւններուն պիտի յաջողին յուժել ժենիւի գաղափարային մասին ՄԱԿի հետաքննութեան գծով գոյութիւն ունեցող տարակարծութիւնները:

Իսրայէլ, որ սկսեցին հաւանութիւն տուած էր ՄԱԿի հետաքննութեան, Երեքշաբթի օր ընդհանուր քարտուղար Քոֆի Անանէն պահանջեց ուշացնել պատուիրակութեան ժամանումը: Իսրայէլ կը պահանջէ, որ ՄԱԿի խմբակին մաս կապման նաեւ հակաահաբեկութեան եւ պիտուորական մասնակցութեան, որպէսզի ժենիւի մէջ առնուք ընտրութիւններ կատարեն նաեւ «ծայրայեղական» պիտեալ կապակցութիւններուն մասին, որոնք գաղափարային օգտագործած են իբրեւ կեդրոն Իսրայէլի դէմ անմասնապահական գործողութիւններուն: Անան ընդառաջ Իսրայէլի պահանջին, որ հանդիպում մը կ'անցարկէր ՄԱԿի եւ իսրայէլեան պատուիրակութեան մը միջեւ: Սակայն Անան ղիտել տուաւ, որ ՄԱԿի խմբակը Շաբաթ օր շրջան պիտի հասնի եւ գործի պիտի լծուի:

ՕՄԻՍԵՍԸ ԱՄԱՍԿԱՆՆԵՐԸ ՎԳՆՉՈՒՄԻՆ ԿՈՒՂՈՒՄ  
Գնի Օնցի եւ Արաբական թրակցիւնին, դիտել տալով, որ «առաքելական» գործողութիւններու սպառնալիք կայ շրջանին դէմ: Արտաքին գործոց նախարարութիւնը յայտնեց, որ շրջանին մէջ ամերիկացիները պզուշ պէտք է ըլլան եւ ապահովութեան յաւելեալ միջոցառումներու դիմեն:

ԱՐՏԵՐԿՐԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ԶԵՒՈՎ ՈԳԵԿՈՉԵՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 87ԱՄԵԱԿԸ

ՅԱՐԳԱՆՔԻ ՈՒ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԵԿ ԱՅԼ ՕՐԻՆԱԿ

Հայկական հաստատությունները փակ մնացին Չորեքշաբթի, 24 Ապրիլին՝ Լիբանանի տարածքին: Կարգ մը հաստատություններ ու համայնքներ ոչ միայն փակված էին իրենց ցուցափեղկերը, այլև յատուկ պատուաններ վետեղած էին անոց վրայ, յիշելով եւ յիշեցրելով Հայկական Ցեղասպանությունը:



ՆՈՅԻ ԵՐԿՐԻՆ ...

Շարունակում՝ 7րդ էջէն

բազմաթիւ այցելուներ իրենց պտոյտներուն ամէնէն հետաքրքրական մասերը կը համարէին երկրին արեւելեան շրջաններուն մշակութային վայրերն ու բնական գեղեցկութիւնը: Այսօր դարձեալ յայտնաբերուելու պատրաստ են Հայկական Անին, Նեմրուժ լեռնանոցները, Վանայ լիճը եւ Աղթամար կղզին, Տրապիզոնի Այա Սոֆիա եկեղեցիին թուրքական հրաշալի եւ արտայայտիչ որմնակարները, վրացական հեռաւոր հիւսիսարեւելեան եկեղեցիները, 5156 մեթր բարձրութեամբ Արարատի լեռնաձոր ներկայութիւնը Տողուպայագիտի հարթավայրին մէջ եւ իշաք փաշային մտակալ 18րդ դարու հանգոյթի պայտուր: Ինքնաշարժս վարձած էի Տրապիզոնի մէջ: Առասպելի կարգ անցած Տրապիզոնը երկար ժամանակէ ի վեր խնդրուով խեղդուած Սեւ ծովու նաւահանգիստ մըն էր: Սակայն անոր խորքերը, ինչպէս արեւելեան թուրքերը մէջ ամէն տեղ, լեցուն են պատմական լեռած գանձերով, որոնք չեն ցանկազորուած եւ շատ աւելի եթերային են նոյն պատճառով: Օրինակ մըն է Քայմաքչին: Քարքարոտ արահետի մը վերջաւորութեան, այժմեւ քովէն անցնելով թափառեցայ ազգային մը տարածքին, ուր անխնամ աւերակներ կային: 15րդ դարու Հայկական վանական համալիր մըն էր, որուն կերպերը կար քարաշէն եկեղեցի մը, որ այժմ կը ծառայէր իբրեւ արտու: Անոր երդիքին մնացորդին վրայ վայրի խոտեր լուսած էին: Սակայն, երբ մէկ կողմ կը հրէի նախիրին անուշաբուր ճարակը՝ փաթեթուած սարդոստայններու մէջ, տեսայ կարմրաւուն եւ թրծած կաւի դոյնով որմնակարները: Ղոթիքի համայնապատկեր մը այստեղ, Քրիստոսի Երուսաղէմ մուտքը պիտոյ:

Ծովեզերեայ ճամբան, որ դէպի Վրաստան կը տանէր, անհրապոյր թանձրածոյլ գերմայրուղիի մը կը վերածուէր: Ուրախ էի, որ կողովուրդի դէպի երկրին խորքեր, բերրի հովիտէ մը վեր, մինչեւ Քաղքար լեռներուն անտառածածկ ստորոտները: Այսէնքէ մէջ կիները դրած էին սեւով ոսկեգոյն իւրապատուկ լաշակներ եւ փայտ կը կտրէին ցուրտ օդին: Զառիվար արտավայրերու վրայ թառած էին լեռնային հնամեայ փայտէ հիւղակներ, եզերուած՝ խոհանոցի պարտէզներով, ուր կ'սնէր լուրիս, եզրիպտացորեն եւ դդում: Ապրանքները ճախարակով կը բարձրանային դէպի բարձրաբերձ հիւղակները:

Այսէնքէ հեմշինիներու բնակավայրն է՝ բարձրաւանդակի ուրոյն ցեղախումբ մը՝ Հայկական արմատներով եւ իւրապատուկ կարողութիւններով: Անոնք վարպետ էին մանաւանդ թրքական քաղցրաւենիքի փայտաւայրի պատրաստութեան մէջ եւ տեղական պարկապուրդով թուրքական նուագեղու մէջ: Քանի մը դար առաջ Հայ էինը, կ'ըսէ Տեմիրճի, վերջին հարկերն էին, որոնք իսլամացան: Վերջերս բազմաթիւ հեմշինիներ կ'աշխատէին գրասալընութեան մարզին մէջ, որովհետեւ Քաղքարի հաշիւը տարածուած է իբրեւ լեռնազնայութեան վայր:

Յարձր օրերուն ջրեցի դէպի արեւելք եւ ապա՝ դէպի հարաւ, Արտուի լեռներուն վրայով: Հետագոտեցի հեռաւոր վրացախօս բնակավայրերը Սաւաթի մէջ, ուր կը տարածուէին աշնանային կախարակական

ՏԵՐ ԶՕՐ

«ՅՈՒՑԵՐՈՐ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՆԵՐՈՒ ԿԵՆՏՐՈՆԱԿ ԱՂԲԻՐ Է ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ»

Այսպէս վկայեցին աւելի քան հարիւր երիտասարդ - երիտասարդուհիներ Տէր Զօրի Նահատակաց յուշահամալիրին մէջ գումարած իրենց իրապատուի համագումարին ընթացքին, անդրադարձաւով ներկայ աշխարհի բարոյական ընթացումներու խաթարումին ու ապարժեց նիւթերու արժեւորման երեւոյթին: Երեքշաբթի, 23 Ապրիլի առաւօտուն, ժամերգութեան տեղի ունեցաւ Ս. Գրոց սերտողութիւն: Յակոբ Պարսունեանի ընթերցումէն ետք, հատուածի մեկնաբանութիւնը կատարեց Քրիստին Դանիելեան, որ անդրադարձաւ Քրիստոս կեանքի օրինակ ընդունելու գաղափարին: Ապա սկսաւ համագումարի շորտրոջ նիւթը, նախագահութեամբ Քրիստին Դանիելեանի: Գաւաթումներ՝ տէր եւ տիրին Նիկոյ եւ Ռուպան Սալիսանեաններ, փորձառական կեանքէն ստեղծուած յոյս տունի եկեղեցու կեանքին մէջ հոգեւոր շարժումներու ծագման ու պարզամտ շարժարիւնները ու համայնական կեանքի դրական մթնոլորտը:

Սրբապանը իր փակման խօսքին մէջ շեշտեց եկեղեցու իրականացումը, առաջարկելով միաժամանակ բոլոր հոգեւոր խմբակներու ներկայացուցիչներէ բաղկացած մարմին մը կազմել, ուժերու մէկտեղման եւ եկեղեցու իրականացումը ամփոփման:

Ժիրարջ Պէօճէքեան, որ Պոսթերնէն հրաւիրուած էր այս առիթով բանաստեղծութիւններ համար: Իր խօսքին մէջ բանաստեղծը շեշտեց, որ անցնող տարուան ընթացքին բաւարարողութիւնները յատկապէս իրենց հետքը ձգեցին եւ պիտի շարունակեն ազդել Հայկական Ցեղասպանութեան ճանաչման ու Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն վրայ: Ան թուեց Սեպտեմբեր 11ի յարձակումները, որոնք բոլոր պետութիւններն ու քաղաքական կազմակերպութիւնները իրենց ուժով մղեցին Հայաստանի դրած են. այս յարձակումներուն օժանդակութիւնը 907 բանաձեւեր, առայդ Ազգայնական սկսած է ստանալ ամերիկեան զինուորական օժանդակութիւնը: Բանաստեղծը շեշտեց, որ հայութիւնը ոչ մէկ վստահութիւն կրնայ ունենալ, որ Ազգայնական այդ օժանդակութիւնը հայութեան դէմ պիտի չօգտագործէ: Ան յիշեց նաեւ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշի նախընտրական խոստումը՝ Հայկական Ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանչնալու եւ յոյս յայտնեց, որ նախագահը այս տարի տէր կանգնի իր խոստումին: Որպէս կարեւոր իրադարձութիւն ան անդրադարձաւ նաեւ «Հայ-

թրքական Հաշտութեան Յանձնախումբ»-ին եւ ներկայացուց անոր պատճառած վնասները Հայկական Ցեղասպանութեան ճանաչման աշխատանքներուն: Հաստատելէ ետք, թէ հաշտութիւնն ու խաղաղ պայմաններու մէջ ապրելը համայն հայութեան տեսլական է, ան շեշտեց, որ հաշտութիւնը կրնայ սկսիլ Հայկական Ցեղասպանութեան թուրքիոյ կողմէ պաշտօնական ճանաչումով, իսկ Ցեղասպանութեան գոծով որեւէ բանակցութիւն պարտի տարուել համայն հայութեան ներկայացուցիչներուն եւ ո'չ ինքնակողմ անձնակազմութիւններու կամ կազմակերպութիւններու կողմէ:

Բանաստեղծը նաեւ ետքեկեղեցույ իրականութեայ վարժարանի աշակերտները ներկայացուցին գեղարուեստական պատշաճ յայտագիր մը:

ՈՒՐՈՒԿՈՒԵՅ

Մոնթէվիտէոյի «Արմենիա» հրատարակչին վրայ տեղի ունեցաւ Հայկական Ցեղասպանութեան 87ամեակի զլխաւոր ձեռնարկը, կազմակերպութեամբ ուրուկուէյայ հայ բազմամիութեան կազմակերպութեան: Ներկայ էին Մոնթէվիտէոյի քաղաքապետ Մարիանա Արանա, Ուրուկուէյի քաղաքական ուժերու ներկայացուցիչներ, ծերակուտականներ, խորհրդարանականներ, Ֆրանսայի, Ռուսիոյ, Իրանի ղեկավարներ եւ Ուրուկուէյի հայոց առաջնորդը:

Մօսք առաւ Ուրուկուէյի մէջ Յունաստանի ղեկավար Տիմիթիոս Տուտուրիս, որ նշեց, թէ «Հայկական Ցեղասպանութիւնը ամբողջ մարդկութեան դատն է», եւ հակառակ անոր որ ան անտիճանաբար կը ճանչցուի եւրոպական կարեւոր երկիրներու կողմէ, ՄԱԿը եւս պէտք է ճանաչի Հայկական Ցեղասպանութիւնը:

Շարունակում 3րդ էջէն

իրաւանց թուրք պաշտպան Ալի Էրտիմ, որ կողմնակալ է թուրք հանրային կարծիքին՝ ճանաչալու Հայկական Ցեղասպանութիւնը:

ՄՈՍԿՈՒԱ

Մոսկուայի հայ համայնքի ներկայացուցիչները 24 Ապրիլին ծաղկապսակ գետեղեցին հայկական գերեզմանատան մէջ Հայկական Ցեղասպանութեան խաչքարին: Նոյն օրը, տեղի ունեցաւ թրքական ղեկավարների մօտ:

ՄԻԼԱՆՕ

Միլանոյի Մարինօ պալատին մէջ, Ապրիլ 23ին կայացած է քաղաքապետ խորհուրդի յատուկ դռնբաց նիստ, որուն հրահրուած են քաղաքապետարանի կազմը ամբողջութեամբ, բազմաթիւ միլանցիներ, եւ Միլանի հայ համայնքի ներկայացուցիչները: Իբրեւ յարգանքի տուրք, նիստը ամբողջութեամբ կայացած է յոտնկայս: Մօսք առած է Միլանոյի քաղաքական խորհուրդի նախագահ Ճիովանի Մառա, որ անդրադարձաւ իր 1997ին Միլանոյի կողմէ եւ ապա Իտալիոյ կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման, եւս:

ՏԵՐ ԶՕՐ ԱՄԷՆ ՏԱՐԻ ...

Շարունակում՝ 4րդ էջէն

Այս բանաձեւեց հայ երիտասարդութիւնը Տէր Զօրի մէջ՝ անգամ մը եւս ընդգծելով, որ ինք չէ հեռացած Հայ եկեղեցիէն, այլ կ'ուզէր, որ ազգը իր հոգեւորական ու աշխարհական պատասխանատուներով զինք լսէ եւ իր ներուժը շաղախէ մեր բոլոր բնագաւառներուն մէջ:

Այս տեսիլքով ու ակնկալութեամբ բաժնուեցան երիտասարդներ ու երիտասարդուհիներ Տէր Զօրի հայրութեան ձեռնարկով ծաղիկեալ անագտէն, հայ կեանքի նորոգուած ճանապարհներուն վրայ միշտ իրարու հետ ըլլալու եւ իրարու հետ Հայ եկեղեցու ծառայելու ուխտով: \* \* \*

Ապրիլեան այդ օրերուն, մաղուող անժամանակ անձրեւին ի տես, արար ասպնջական ժողովուրդի գաւակներ ըսած էին Տէր Զօրի մէջ ապրող հայու բեկորներուն, թէ հայեր օրհնութիւն բերին իրենց բերքին ու վաստակին:

Այս օրհնութեան վերածննդեան խտացումը եւ տեսայ Մարկատէի մէջ, երբ մեր նահատակներուն անձրեւներուն վրայ կառուցուած Ս. Յարութիւն մատուռին մէջ հարիւր հայ բերաններէ ու հոգիներէ աղօթք կը բարձրանար առ Աստուած, երբ Հայ Դատի հետապնդման ու պատմական Հայաստանի վերատիրացման գրաւականը կը կոփուէր սրտերու մէջ, գատիկի կապալեալ միջտա մը կը քալէր խորանին տակ պապականութեան մէջ ամփոփուած մեր նահատակներուն սուրբոտներուն ուղղութեամբ, լուրջու համարձեւեղ կը շարունակուի եւ Տէր Զօր ամէն տարի մեզ կը հրաւիրէ նոր երիտասարդ-երիտասարդուհիներով իրեն ուխտի գալու:

Տէր Զօր մեզ կը սպասէ...:

ՍԱՀՄԱՆԷ ՍԱՀՄԱՆ...

Շարունակում՝ 7րդ էջէն

առանձին ծրագիրներ, ինչպէս՝ Այա Սոֆիայի վերանորոգութիւնը եւ անմիջական փրկութիւնը Զէնուայի խճանկարներուն: Սակայն ասոնք առանձին պարագանք են:

Նուազ տարողութեամբ բայց աւելի ողբալի խոշոր տուն մըն է կարգ մը պահպանողական քաղաքագէտներու մօտեցումը: Անոնք կը հաւատան, որ պետութիւնը պէտք չէ շատ մտահոգուի նախապատմական ժառանգութեան պահպանումով, որովհետեւ այդ ժառանգութիւնը կը հակասէ իսլամական հաստատութիւններուն: Օրինակ, Անգարայի քաղաքապետ կ'ուզէ փոխել քաղաքին խորհրդանիշը, որ հիմնուած է հիթիթական գարնայական արեւի մը վրայ եւ որդեգրել մզկիթի մը գմբէթը պատկերող խորհրդանիշ մը: Ան կ'ըսէ, թէ հիթիթները «թուրք չէին»:

Սակայն ճշմարտութիւնը այն է, որ թուրքերը առնուազն աշխարհագրական ժառանգորդներն են մարդկային պատմութեան մէջ ամէնէն հզօր եւ գեղարուեստական առումով ամէնէն օժտուած քաղաքակրթութիւններուն: Թուրքիոյ թանգարանները լեցուած են այս աւանդին հարստութեամբ, որ նաեւ կը գերազանցէ զանոնք:

Շարունակում՝ 7րդ էջէն

անտառներ, խուզուած մարգագետիններ եւ կոկիկ գիւղեր՝ վառելիքայտի դէպքով: Առաւօտ մը մազըլցեցայ 2640 մեթր բարձրութեամբ Ճամ Փասը եւ կանաչ անտառներով պատուած բարձունքները ձգեցի ետիս, յառաջանալով դէպի Անտառուի խորքերը: Յորին խիտ հասկերով պատուած ծառապուրկ դաշտեր կը տարածուէին դէպի Հայաստան: Սագերու երամներ կային ճամբաներուն վրայ, եւ տափակ երդիքով բնակավայրերը ցեխով ծեփուած էին: Բակերուն մէջ յարդի հակայական դէպքեր եւ չորցած թրիքի կոկիկ բլրակներ վառելանիթ կը հայթայթէին մահաշունչ ձմարն:

Կարսէն անդին կտրեցի փոշոտ եզերքով հարթավայր մը, մինչեւ որ ճամբան վերջացաւ աշխարհի ծայրը: Անիի հակառակ 2 թուն ծանրութեամբ աւազաքարէ պատեղան առէլ: Մեծ դարպասին ետին կը տարածուէր վայրը քաղաքի մը, որ 12րդ դարուն, իր փառքի օրերուն համազօր էր Գահիրէի եւ Կոստանդնուպոլսի: Ժամանակին 200 հազար հոգի ապրած է այստեղ: Այդ կէսօր հաշուեցի միայն 3 ուսեր, անգլիացի տարեց ամոլ մը եւ տոմս վաճառող մարդը, որ բանքի մը մթթմթիւնը հայերուն մասին: Մահմանի խորունկ հեղեղատէն վեր, անջրդի տարածութեան մէջ, կողոպուտէ եւ երկրաշարժէ վերապրած քանի մը աննկատ եկեղեցիներ եւ պայտաններ կը տատանին շօշափելի մեղամաղձոտութեամբ:

Ճամբան կ'երթար դէպի հարաւ, ուղիղ դէպի Իրանի սահմանը: Զինուորական անցարգելները բազմաքան, թէեւ բոլոր գիտուողները քաղաքավար էին անխտիր: Արարատ լեռը խոյացաւ դիմացս, ամպի թելեր կը նաւարկէին անոր ձիւնածածկ գագաթին: Աւազամբրիկ մը սկսաւ փչել Տողուպայագիտի լուռ ու ընկճուած փողոցներուն մէջ եւ գիւղաքաղաքին գրասարկութեան հանգստեան կոչուած ընկերութեան պատասխանատուն յիշեց, թէ ժամանակին ինչպէս օրական հազար օտարներ կ'անցնէին Իրանի սահմանը, շահին տապալելէն առաջ:

Քնցեցինք դէպի սահմանը, դեղին երկիրքի մը տակ, ապա անասուններու ոտնահետքերով բացուած արահետին յառաջացանք դէպի սրճադրոյն ու չոր բլուրները: Կիսաւեր ամարանոցի մը քովէն դիտեցինք հանդիպակաց լեռան լանջը, ուր բան մը ցցուած էր: 150 ոտք երկարութեամբ եւ նաւու երեւոյթով բան մը: Հասան փաշա, տեղւոյն պահակը թէյ հրամցուց եւ մեր ուշադրութիւնը հրահրեց օրաթերթերէ կտրուած ու պատին փակցուած դեղնած գրութիւններու վրայ: «Նուհուս Զեմին» ըսաւ: Հասան Փաշա կասկած չուներ, թէ կը դիտէինք Նոյնան տապալը, որ Արարատի լանջերուն հանգչած էր ջրհեղեղէն ետք, ինչպէս պատմեց ան: Տարբեր վայրի մը մէջ կարեւորութիւն պիտի չընծայէ նման պատմութիւններու: Սակայն այստեղ, այս երկիրալի բնաշխարհին մէջ դիւցապատկէպի մը քաղաքականութիւնը անդիմադրելի էր, եւ պահ մը նման բան մը պարզապէս հաւանական թուաց:

(ՅԱՊԱՒՈՒԱՄ)